

մտահայերուս մէջ հայկական ոճին ոչ ծանօթութիւնը կար և ոչ ճաշակը :

Շէնքը քարուկիր է ամբողջովին , թանձր պատերով և տանիքով . շինուած է անսիւն : Երկու կողմը ունի պահարաններ , աջակողմեանին մէջ կայ մկրտութեան ակազանը , և Ս . Յովհաննու Կարապետի սեղան մը , ձախակողմեանին մէջ Ս . Ստեփանոսի սեղան մը , երկուքն ալ պատարագամատոյց : Աւագ Խորանին երկու կողմերը կան ականդատուններ , իւրաքանչիւրը անցքով մը քովի պահարանին հետ յարաբերութեան մէջ . բայց աջակողմի անցքը կ'մնայ միշտ փակ : Մարմարիոնեայ է բնին ամբողջ : Աւագ Խորանը ունի փայտեայ շատ սիրուն խաչկալ մը , գոթական ոճով արուեստագործուած : Երկու կողմի փոքր սեղանները պատին մէջ դեղուած խորշեր են միայն , երկուքն ալ պատարագամատոյց , նուիրուած Ս . Պօղոս և Ս . Պետրոս Առաքելոց : Մարմարիոնով յատակուած են նաև դասը , մեծ ստեսնը և գաւիթը :

Ատեանը դասէն կ'անջատուի փայտեայ ցած սիրուն վանդակով մը . աջակողմեան դասին գլուխն է Առաջնորդական գեղակերտ ակթուը , գոթական ամպոլիսնիով մը . ակթուին երկու բազուկները վեր կը բռնուին Պետրոս և Պօղոս Առաքաւաններու փայտէ քանդակուած անդրիներով : Կողմական պատերուն իւրաքանչիւրին վրայ կան երեքական սիրուն պատուհաններ , երկաթեայ գեղեցիկ վանդակներով պատուպարուած և գունազեղ սպակիներով զարդարուն :

Նախկին գաւիթը , որ հիմակ խտնուած է տաճարին , անկէց բաժնուած էր երկաթ վանդակապատով մը , որ նոյնպէս կ'մնայ : Այժմու գաւիթին ձախ կողմը կայ բանկալը , և աջ կողմն է մարմարիոնեայ սանդուխ մը , որ կ'առաջնորդէ կամանց վերնատունը . սակից պատուհանի անցքով կ'մանուի նորայէն գաւիթին վերնայարկի մեծ սենեակը , որ կ'գործածուի իբրև պահարան եկեղեցական իրաց :

Եկեղեցին ներքուստ և ամբողջովին պարզ իւղաներկուած է սրբատաշ քարի նմանակերտութեամբ . խորանին ձախտին մէջ կողմը նկարուած է Ս . Կոյսը , միւս կողմը Աւետաբեր Հրեշտակը : Արտաքուստ նոյնպէս պարզօրէն բաւաներկուած է :

Տանիքի արեւելեան ծայրին վրայ է քարուկիր զանգակատունը , ուր կ'ելլուի , խորանին ձախակողմէն վերելակուող սանդուխէ մը :